REPUBLIC OF ARMENIA
KOTAYK REGION MAYAKOVSKI VILLAGE

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
КОТАЙКСКИЙ РЕГИОН СЕЛО МАЯКОВСКИЙ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն , Կոտայքի մարզ, Մայակովսկի համայնք,
գ. Մայակովսկի , 1փ. 8/1 շ. , Հեռ060 28 5013 , 060 28 50 12 ., E-mail mayakovski-1@mail.ru

N 29
17 փետրվարի 2015թ.

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Հարությունյան

'Տեղական ինքնակառավարման մասին' Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջի համաձայն , Ձեզ է ներկայացվում Մայակովսկի համայնքի ավագանու 2015 թվականի փետրվարի 11-ի երկրորդ նիստի որոշումները :

Առդիր. 1 ֆայլ :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

.Կատ. աշխ. քարտուղար
Վ. Փայտյան
094 24 11 34

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 11» փետրվարի 2015 թվականի N 08-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով ***համայնքի ավագանին որոշում է.***
Հաստատել համայնքի ավագանու հերթական 2-րդ նիստի *օրակարգը*.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքի ավագանու 2014թվականի դեկտեմբերի 10-ի N 46-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքում աղբահանության իրականացման կարգը և սանիտարական մաքրման սխեման հաստատելու մասին .
3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքում վարչական հսկողության իրականացման արդյունքների քննարկման մասին

Կողմ (6)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
ԱՋԱՏՅԱՆ ԼԵՌՆԻԿ		
ԱԹՈՅԱՆ ԻՐԻՆԱ		
ԱՍԱՏՐՅԱՆ ՍԱՀԱԿ		
ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՇՈՏ		
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ		
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ**

Գ.Մայակովսկի
2015թ.փետրվարի 11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 11 » փետրվարի 2015 թվականի N 09 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 46-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի , « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի պահանջներով՝

համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

1. Մայակովսկի համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 10-ի « Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքի 2015 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 46-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն N N 1,2 հավելվածների :

Կողմ (6) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

ԱՋԱՏՅԱՆ ԼԵՌՆԻԿ
ԱԹՈՅԱՆ ԻՐԻՆԱ
ԱՍԱՏՐՅԱՆ ՍԱՀԱԿ
ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՇՈՏ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ**

Գ.Մայակովսկի
2015թ.փետրվարի 11

Հավելված N 1

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքի

ավագանու 2015թ. [illegible] 09 որոշման

Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքի ավագանու 2015թ փետրվարի 11-ի
N 09- Ն որոշման հավելվածի հատված 2-ում կատարվող փոփոխությունները

հազ.դրամ

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	տարեկան հաստատված պլանը		
					Ընդամենը	այդ թվում՝	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4		6	7	8
2000	X	X	X	**Ընդամենը ծախսեր**	0,0	0,0	
2110	01	1	0	*Օրենսդիր և գործադիր մարմիններ*	550,0	550,0	
2111	01	1	1	*Օրենսդիր և գործադիր մարմիններ պետական կառավարում*	550,0	550,0	
2900	09	0	0	*Կրթություն*	30,0	30,0	
2932	09	3	2	*Միջին մասնագիտական կրթություն*	30,0	30,0	
3100	11	0	0	*Պահուստային ֆոնդեր*	(580, 0)	(580, 0)	
3112	11	1	2	*ՀՀ համայնքների պահուստային ֆոնդեր*	(580, 0)	(580, 0)	

Հավելված 2
<< Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք
ավագանու 2015թ փետրվարի 11-ի N 09 -Ն որոշման

Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքի ավագանու 2015թ. փետրվարի11-ի
N 09- Ն որոշման հավելվածի հատված 3-ում կատարվող փոփոխությունները

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը	այդ թվում՝	
				վարչ-ն	ֆոնդ-ն
1	2	3	4	5	6
4000	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝		0,0	0,0	
4050	Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝	x	0,0	0,0	
4251	Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում	4251	550,0	550,0	
4634	*այլ նպաստներ բյուջեից*	4729	30,0	30,0	
4771	*Պահուստային միջոցներ*	4891	(580, 0)	(580, 0)	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 11 » փետրվարի 2015 թվականի N 10 -Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 13-րդ հոդվածների պահանջով, համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքում աղբահանության իրականացման կարգը, համաձայն N 1 հավելվածի :
2. Հաստատել Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքի սանիտարական մաքրման սխեման, համաձայն N 2 հավելվածի :

Կողմ (6) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

ԱՋԱՏՅԱՆ ԼԵՌՆԻԿ
ԱԹՈՅԱՆ ԻՐԻՆԱ
ԱՍԱՏՐՅԱՆ ՍԱՀԱԿ
ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՇՈՏ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ**

Գ.Մայակովսկի
2015թ.փետրվարի 11

Հավելված 1
ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի
համայնքի ավագանու 20[illegible] թվականի
[illegible] N [illegible] որոշման

Կ Ա Ր Գ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1.Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքում աղբահանության իրականացումը :
2.Աղբի հեռացումը Մայակովսկի համայնքի վարչական տարածքից իրականացվում է բնակելի տներից , հասարակական և արտադրական նշանակության կառույցներից՝ շաբաթական առնվազն երկու անգամ :
3. Անհատական բնակելի տներից աղբի հեռացումը իրականացվում է աղբի հեռացման համար նախատեսված բեռնատար մեքենայով՝փաթեթավորված կամ տարաներում լցված աղբի բարձման միջոցով :
4. փաթեթավորված կամ տարաներում լցված աղբի շրջապատում առկա և հեռացման ընթացքում թափված աղբը պետք է հավաքվի և հեռացվի :
5. Համայնքի տարածքում առկա կենցաղային աղբը պարտադիր հեռացվում է՝ անկախ աղբ առաջացնողի ներկա լինելու հանգամանքից :
6. Ոչ կենցաղային աղբը, ինչպես նաև խոշոր եզրաչափերով աղբը աղբահանության վճար վճարողների կողմից ձեռք բերված աղբամաններում , որոնք տեղադրվում են աղբահանության վճար վճարողներին պատկանող համապատասխան տարածքներում :
7. Աղբահանությունը Մայակովսկի համայնքում կազմակերպել համաձայն հետևյալ նվազագույն ժամանակացույցի՝

Հ/հ	Շաբաթվա օրերը	Փողոցների, տարածքների անվանումը
1.	Երկուշաբթի	1-ին փողոցից 6-րդ փողոցը փակուղիներով, հուշարձանը և եկեղեցիները
2.	Ուրբաթ	7-րդ փողոցից 15-րդ փողոցը փակուղիներով,գերեզմանատները

8. Աղբի հեռացման ժամային գրաֆիկը համաձայնեցվում է համայնքի ղեկավարի հետ և իրազեկվում է բնակչությանը :
9. Աղբի տեղափոխումը կատարվում է աղբաթափման համար սահմանված աղբավայրում՝ նվազագույնի հասցնելով շրջակա միջավայրի աղտոտումը :

Աշխատակազմի քարտուղար [signature] Վ. Փայտյան

[illegible] Մայակովսկի
համայնքի [illegible] 201[illegible] թվականի
[illegible] 10-ի որոշման

Ս Խ Ե Մ Ա
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ

1. Մայակովսկի համայնքում սանիտարական մաքրումը ներառում է ընդհանուր օգտագործման տարածքների / փողոցների, հուշարձանների, բակերի, մայթերի, կամուրջների և ընդհանուր օգտագործման այլ տարածքների/ մաքրումը աղբից, տերևակույտերից, փողոցների՝ ձյունից և սառույցից մաքրումը :
2. Սանիտարական մաքրման աշխատանքները, կապված տարվա եղանակների հետ, իրենց բնույթով և խնդիրներով տարբեր են, այն բնութագրվում է ամառային և ձմեռային մաքրմամբ:
3. Ամառային մաքրումն իր մեջ ներառում է մաքրման ձեռքի աշխատանքի և մեքենայացված մաքրման տեխնոլոգիաները :
4. Փողոցներում մաքրումը կատարվում է ձեռքով, մաքրվող տարածքներից աղբը հավաքելով կույտերի տեսքով՝ փողոցներում այդ նպատակի համար հատկացված տեղերում :
5. Ասֆալտապատ փողոցներում, որոնք ունեն անձրևատար առուներ, իրականացվում է առուների մաքրման աշխատանքներ :
6. Մեքենայացված մաքրման խնդիրն է ապահովել փողոցներից աղբի հեռացումը:
7. Ձմեռային մաքրումն իր մեջ ներառում է փողոցների, մայթերի մաքրումը ձյունից,պայքար փողոցների սառցակալման դեմ,սառցակույտերի հեռացումը :
8. Համայնքում սանիտարական մաքրման աշխատանքների ժամանակացույցը համաձայնեցվում է համայնքի ղեկավարի հետ և իրազեկվում է բնակչությանը :
9. Սանիտարական մաքրման ենթակա փողոցները, տարածքները, աշխատանքներ ծավալները Մայակովսկի համայնքում հետևյալն են՝

Հ/հ	Մաքրվող տարածքների անվանումը	Ասֆալտապատ		Ոչ ասֆալտապատ		Ընդամենը	
		երկարությունը մետր	տարածքը ք/մ	երկարությունը մետր	տարածքը ք/մ	երկարությունը մետր	տարածքը ք/մ
1	1-ին փողոց փակուղիներով	700	3500	80	260	780	3760
2	2-րդ փողոց փակուղիներով	100	500	100	440	200	940
3	3-րդ փողոց փակուղիներով	180	900	55	220	235	1120
4	4-րդ փողոց	300	2100	0	0	300	2100
5	5-րդ փողոց	750	3750	0	0	750	3750
6	6-րդ փողոց	120	600	0	0	120	600
7	7-րդ փողոց	500	3000	0	0	500	3000
8	8-րդ փողոց	480	2880	0	0	480	2880
9	9-րդ փողոց	560	3360	0	0	560	3360
10	10-րդ փողոց փակուղով	400	2400	120	600	520	3000
11	11-րդ փողոց	0	0	560	3360	560	3360
12	12-րդ փողոց	0	0	980	5880	980	5880
13	13-րդ փողոց	0	0	340	2040	340	2040
14	14-րդ փողոց	0	0	320	1920	320	1920
15	15-րդ փողոց փակուղիներով	0	0	860	5160	860	5160
16	գերեզմանատներ	0	0	0	2020	0	2020

17	Մայակովսկիից Ձորաղբյուր տանող ավտոճանապարհ	1200	6000	0	0	1200	6000
18	Մայակովսկիից Արամուս տանող ավտոճանապարհ	900	5400	0	0	900	5400
	Ընդամենը	6 190	34 390	3 415	21 900	9 605	56 290

10. Համայնքի ասֆալտապատ փողոցների մայթերի և հրապարակների տարածքից մաքրման տակ ընդգրկված է 34 390քառ.մետր,որից ձեռքով մաքրման տակ՝ / 2 x 6190 / մ =12 396 քառ.մետր, իսկ ոչ ասֆալտապատ տարածքներից մաքրման տակ ընդգրկված է 21 900 քառ.մետր/ սանիտարական մաքրման ենթակա փողոցների, տարածքների մասին տեղեկությունը ներկայացված է 9-րդ կետում/:
11. Համայնքի ընդհանուր օգտագործման մաքրվող տարածքներից առաջացող աղբի ծավալները կազմում են՝
1/ ասֆալտապատ ծածկույթ ունեցող փողոցների,հրապարակների մեկ քառ.մետր մակերեսից տարեկան գոյանում է մոտ 5կգ ավելվածք,
2/ոչ ասֆալտապատ տարածքների մեկ քառ.մետր մակերեսից՝0.5կգ :
12. Համայնքի մաքրվող տարածքից կգոյանա՝
1/ 34 390 X 0.005 =171,9 5 : 12 X 9 =128,9 տոննա աղբ,
2/ 21 900 X 0,0005 = 10.95 : 12 X 9 =8,21 տոննա աղբ :
3/ Ընդամենը՝ 137,11 տոննա աղբ, օրական ավելվածքը կկազմի 137,11տ : 270 օր =0,50 տոննա:
13.Մայակովսկի համայնքում սանիտարական մաքրման ենթակա ընդհանուր օգտագործման տարածքներից առաջացող աղբի տեղափոխումը իրականացնել աղբահանության համար օգտագործվող բեռնատար մեքենայի միջոցովէ բարձումն իրականացնել ձեռքով,անհրաժեշտության դեպքում էքսկավատրով :
14.Աղբի տեղափողումը կատարվում է աղբաթափման համար նախատեսված աղբավայր՝ նվազագույնի հասցնելով շրջակա միջավայրի աղտոտումը :
15.Փողոցների մաքրման աշխատանքները կատարել համայնքին պատկանող տրակտրի միջոցով, անհրաժեշտության դեպքում համապատասխան մասնագիտացված մեքենայի կամ էքսկավատրի միջոցով :
16. Մայակովսկի համայնքում սանիտարական մաքրման ենթակա հուշարձաններն են՝
1/ Հայրենական Մեծ պատերազմի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձան՝ 3-րդ փողոցի միջին մասում,
2/ << Սուրբ Գևորգ>>եկեղեցուն հարող տարածք՝ 3-րդ փողոցի վերջնամաս,
3/ Թիվ 2 գերեզմանատանը գտնվող << Սուրբ Հովհաննես >>եկեղեցուն հարող տարածքները՝ Մայակովսկի-Արամուս ավտոճանապարհի վրա :

Աշխատակազմի քարտուղար Վ. Փայտյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 11 » փետրվարի 2015 թվականի N 1մ -Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով, քննարկելով Կոտայքի մարզպետարանի աշխատակիցների կողմից Մայակովսկի գյուղական համայնքում 2014 թվականի նոյեմբերի 19-ից 21-ը ընկած ժամանակահատվածում վարչական հսկողության իրականացման վերաբերյալ կազմված N 23 արձանագրության արդյունքները, համայնքի ավագանին ***որոշում է.***

Ընդունել ի գիտություն վարչական հսկողության արդյունքները , հաշվի առնելով ակտում նշված դիտողությունները :

Կողմ (6)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
ԱԶԱՏՅԱՆ ԼԵՌՆԻԿ		
ԱԹՈՅԱՆ ԻՐԻՆԱ		
ԱՍԱՏՐՅԱՆ ՍԱՀԱԿ		
ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՇՈՏ		
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ		
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ**

Գ.Մայակովսկի
2015թ.փետրվարի 11